ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնների վերաբերյալ

1. **Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի երկրորդ կարգի մասնագետ /ծածկագիր՝ 64-4.3-43/**

Բաժնի վարիչի հանձնարարությամբ մասնակցում է մարզային ենթակայության կազմակերպությունների, համայնքների զարգացման ծրագրերի կազմման աշխատանքներին, համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների, բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման ուսումնասիրությանը, պետական բյուջեից սնվող Աշխատակազմի և մարզային ենթակայության հիմնարկների կողմից իրականացվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների ձեռք բերումների համար գնումների գործընթացը կազմակերպող պատասխանատու ստորաբաժանումների աշխատանքներին, իրականացնում է Բաժնի փաստաթղթային սպասարկումը, կատարում է փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները.

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) առնվազն միջնակարգ կրթություն.

2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Գնումների մասին» ՀՀ օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

5) Աշխատավարձի չափը՝ 82675 /ութսուներկու հազար վեցհարյուր յոթանասունհինգ ՀՀ դրամ/:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2. **Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի երկրորդ կարգի մասնագետ /ծածկագիր՝ 64-4.3-44/**

Բաժնի վարիչի հանձնարարությամբ մասնակցում է մարզային ենթակայության օբյեկտների տեխնիկական վիճակի ուսումնասիրությանը, արդյունքները ներկայացնում Բաժնի վարիչին, ըստ անհրաժեշտության մասնակցում է կապիտալ

շինարարության և հիմնանորոգման աշխատանքների նախնական ծախսերի հաշվարկին, մասնակցում է կապալառու կազմակերպությունների կողմից ներկայացված հանձման-ընդունման արձանագրություններում ներկայացված աշխատանքների իսկության ուսումնասիրությանը, իրականացնում է Բաժնի փաստաթղթային սպասարկումը, ապահովում է փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, իրականացնում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) առնվազն միջնակարգ կրթություն.

2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Քաղաքաշինության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

5) Աշխատավարձի չափը՝ 82675 /ութսուներկու հազար վեցհարյուր յոթանասունհինգ ՀՀ դրամ/:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր՝ 64-4.1-6/

Բաժնի վարիչի հանձնարարությամբ մասնակցում է սոցիալական խնդիրներին առնչվող համապատասխան փաստաթղթերի կազմմանը, կատարում է տնային այցելություններ՝ քաղաքացիների ընտանեկան վիճակի ուսումնասիրության նպատակով, կատարում է քաղաքացիներից ստացած դիմում բողոքների ուսումնասիրություններ, մասնակցում է Մարզում հաշմանդամության իրավիճակի վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվությունների կազմման աշխատանքներին, մասնակցում է քաղաքացիներին ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունքի ապահովման հարցերում առաջացած խնդիրների լուծման գործընթացին, աջակցում է քաղաքացիներին, կազմակերպում է սոցիալական աջակցության խորհրդների գործունեությունը, սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառումը.

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) առնվազն միջնակարգ կրթություն.

2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Պետական նպաստների մասին», «Սոցիալական աջակցության մասին» և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

5) Աշխատավարձի չափը՝ 107808 /մեկ հարյուր յոթ հազար ութհարյուր ութ ՀՀ դրամ/:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ հիմնական աշխատակցի հղիության և ծննդաբերության արձակուրդից 2019 թվականի փետրվարի 10-ը վերադառնալը:

Վերը նշված ժամանակավոր պաշտոնները կարող է զբաղեցվել՝ տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:

Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան (ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին՝

1) գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

2) անձնագրի և հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթղթի պատճենները

3) կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճեն (պատճենները),

4) աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում),

5) արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

6) մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով (gegharquniq.andznakazm@mta.gov.am)՝ ներկայացնելով անձնագիր ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան (ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7) անձնակազմի կառավարման բաժին:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են զանգահարել անձնակազմի կառավարման բաժին 060650626 հեռախոսահամարով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 03.10.2018թ.:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի
մարզպետարանի գլխավոր քարտուղար
պարոն Սևակ Խլղաթյանին

..... ից
դիմողի անուն հայրանուն ազգանունը

.....
դիմողի գրանցման հասցեն

.....
դիմողի հեռ. (աշխատանքային, բնակ., բջջ.)

.....
անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից
է տրվել

Ծանոթանալով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կողմից հրապարակված հայտարարությանը՝ Խնդրում եմ Ձեզ ժամկետային աշխատանքային պայմանագրով ինձ նշանակել ----------
---

----------մասնագետի (ծածկագիր՝) թափուր պաշտոնում:

Հայտնում եմ,որ

1. Համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

(ունեմ, չունեմ)

2.Տիրապետում եմ համակարգչային ծրագրերին (Վինդոուզ, Վորդ, Էքսել, Աքսես և այլն)

---

3. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ

(ճանաչված եմ, ճանաչված չեմ)

4.ՀՀ Կատավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններկց որևէ մեկով

(տառապում եմ, չեմ տառապում)

5. Այլ վճարովի աշխատանք (բացառությամբ գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից)

(իրականացնում եմ, չեմ իրականացնում)

6. Անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ ----------

(զբաղվում եմ, չեմ զբաղվում)

7. Անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ խնամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ

(գտնվում եմ, չեմ գտնվում)

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փասթաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու մասին:

Դիմող՝ ---------- ----------

ստորագրություն անուն,ազգանուն

<<------->> ----------2018 թ.